

# ՄԵՐԿԱՅՎԵՑ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻ ՏՐՈՑԿԻՍ Մ. ՅԵՆՊԻԲԱՐՅԱՆԸ

Ապրիլի 28-ին Պետական Համալսարանի սկզբնական կուսակազմակերպութեան ժողովը լսեց Յերևանի կուսակցական կազմակերպութեան Գաղափարային կոմիտեի քարտուղար շնկեր Մ. Իանիելյանի Հաղորդումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի վորոշումն մասին: Ինչպես Հայտնի յե, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի վորոշմամբ քննարկվել ելին Համալսարանի կուսակազմակերպութեան ընտրութիւնները, վորովհետև խախտվել եր կուսակցական ժողովը վարելու տարրական կարգը-ժողովի (վորտեղ կային 120 կոմունիստ) նախազանութեան փոխարեն ընտրվել ելին միայն ժողովի նախազան և քարտուղար: Ժողովի նախազան, կուսկոմիտեի անգամ և կուսկոմիտեի անդամի պատգամավոր եր ընտրվել Համալսարանի ուկտոր Մ. Յենպիբարյանը, վորն ունեցել և տրոցկիստական անցյալ:

Ժողովն արձանագրեց, վոր նախորդ կուսժողովում ունեցած իր յեւույթում Մ. Յենպիբարյանն անկեղծ չի յեղել և սքողել ու կոծկել և իր Հակահեղափոխական - տրոցկիստական անցյալը:

Մ. Յենպիբարյանի այս անգամ ունեցած յեւույթի հիման վրա ժողովը նրան մերկացրեց վորպես կատարյալ Հակահեղափոխականի, յերկերեսանի տրոցկիստի, վորը յերկար ժամանակ լիտիարար խաբել և կուսակցութեանը: Պետական Համալսարանի կուսակցական կազմակերպութեան ժողովը նշեց, վոր յերկերեսանի Մ. Յենպիբարյանը յերկար ժամանակ, մինչև անգամ այս տարվա ապրիլի 26-ին՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստում թաղցրել և իր տրոցկիստական-Հակահեղափոխական Հանցանքները մի շարք փաստերը:

Վորո՞նք են այդ փաստերը:  
Մ. Յենպիբարյանը դեռ 1923 թվականից մինչև 1926 թվականը ներառյալ ունեցել և տրոցկիստական Հարցքներ, կապ և պաշտպանել տրոցկիստներին հետ, նրանց հետ ունեցել և հակախուսակցական դրույցներ: Նա 1924 թվականին թեր և քիչարկել տրոցկիստական բանաձևին՝ ներկու-

սակցական դեմոկրատիայի Հարցերի շուրջ: Ինձ և յեղել կուսակցութեան դեմոկրատական ցենտրալիզմի լինին-յան-ստալինյան սկզբունքին:

Նա 1926 թվին Հանդիպումներ և ունեցել Հակահեղափոխական տրոցկիստներ Ա. Սահակյանի և Մելիք-Սողոյանի հետ, նրանցից ստացել և տրոցկիստական փաստաթղթեր, այդ մասին յերբեք տեղյակ չի պահել կուսակցութեան Համապատասխան որդաններին և մինչև հիմա ել ձայն չի հանել այդ առթիվ:

Յենպիբարյանը նույնիսկ Հակահեղափոխական Յոյակ Ամատունու բանտարկութիւնից հետո ել թաղցրել և կուսակցութեանից այն Հանցամանքը, վոր Յ. Ամատունին արտասահմանում՝ Լոնդոնում կապ և ունեցել ինչ վոր կասկածելի, լրտեսութեամբ դրապոլոզ կնոջ հետ: Նա թաղցրել և Յ. Ամատունու հետ ուսեցած իր անձնական կապերը:

Լինելով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի անգամ, Մ. Յենպիբարյանը զիտակցաբար ու միտումնավոր կերպով խուսափել, փախել և բյուրոյի 1936 թ. Հուլիսի 7-ի նիստից, վորտեղ ճննվելու յիր Հակահեղափոխական տրոցկիստ Ա. Գալոյանի և ուրիշներին Հարցը և վորտեղ պատուվում եր նաև Հայաստանում տրոցկիստ-նացիոնալիստներին զիվերսիտն գործերը Հովանավորող դավաճան Պանջյանի Հակահեղափոխական գիմակը: Այդպիսով նա զնացել և կուսակցութեանը խաբելու ուղիով:

Այս բոլոր փաստերը Մ. Յենպիբարյանն ընդունեց միայն հիմա, յերբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն մերկացրեց նրա խաբերալութեանն ու անկեղծ չլինելը և կորակաւնապետ դրեց նրան հետազայում կուսակցութեան մեջ թողնելու Հնարավորութեան Հարցը:

Կուսակցական ժողովը վորտեղ հեռացնել Մ. Յենպիբարյանին կուսակցութեան շարքերից: Համապատասխան կուսակազմակերպութեան յերկրորդ ընտրական ժողովում կուսկոմիտեի քարտուղար ընտրվեց ընկեր Մ. Սարուխանյանը:  
Դ. Վ.